

# Ինչպես կանխարգելել COVID-19 վիրուսի տարածում



*Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանը միջոցներ է ձեռնարկում COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար:*

**Մաքրություն պահպանեք.** Ներկայում առաջարկվող նախազգուշական միջոցները վիրուսից խուսափելու համար նույն նախազգուշական միջոցներն են, որոնք դուք պետք է ձեռնարկեք գրիպից խուսափել համար:

- Ձեռքերը հաճախ ջրով և օճառով լվացեք, առնվազն 20 վայրկյան: Եթե օճառ և ջուր մատչելի չէ, ապա օգտագործեք ալկոհոլի վրա հիմնված ձեռքի ախտահանող միջոցը:
- Խուսափեք ձեր աչքերը, քիթը և բերանը ձեռքով դիպչելուց:
- Խուսափեք հիվանդ մարդկանց հետ մոտիկ շփումից:
- Ծածկեք ձեր հազը կամ փռչոցը անձեռոցիկով և այն նետեք աղբարկղը: Եթե անձեռոցիկները մատչելի չեն, հազը կամ փռչոցը ծածկեք ձեր արմունկի ներսի մասով և հետո լվացրեք ձեռքերը:
- Հաճախ շոշափվող առարկաները և դրանց մակերեսը մաքրեք և ախտահանեք:

**Մնացեք տանը.** Ինչպես ցանկացած հիվանդության պարագայում՝ երբ հիվանդ եք, խնդրում ենք մնալ տանը: Վերադառնալ աշխատանքի կամ դպրոց, մինչև ձեր ջերմությունը 100 աստիճանից ցածր լինի, առանց տաքությունը նվազեցնող դեղամիջոցների՝ սպասելով առնվազն 24 ժամ:

- Հնարավորին չափ շուտ տուն ուղարկեք՝ աշակերտներին, ուսուցիչներին և աշխատակիցներին, ովքեր ջերմություն և/կամ շնչառական վարակի ախտանիշներ ունեն: Հնարավորության դեպքում մեկուսացման վայր առանձնացրեք, տուն վերադառնալու սպասող անձանց համար:

**Զգուշացեք.** Արդիական տեղեկությունները կարելի է ստանալ <https://www.gusd.net> կայքում:

- Համագործակցել բոլոր գործընկեր կազմակերպությունների հետ, որոնք ծառայում են աշակերտներին՝ կիսելու թարմացված տեղեկություններ և ապահովել հետևողական պրակտիկա:

## Տեղեկությունների համար կապ հաստատեք՝

- Հարցերի համար - Հասարակական տեղեկատվություն (818) 241-3111 x1218
- Ճանապարհորդական հարցեր - Կրթական ծառայություններ (818) 241-3111 x1208
- Դպրոցի փակման հարցեր - Կրթական ծառայություններ (818) 241-3111 x1208
- Առողջապահական հարցեր - Առողջապահական ծառայություններ (818) 241-3111 x1407
- Հարմարությունների հարցեր - FASO (818) 242-0003 x1100
- Դպրոցին վերաբերող հատուկ հարցեր - կապվեք դպրոցի հետ